Ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Մեծամորի հ.1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի(12 դասաժամ), անգլերենի (6 դասաժամ), ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ապրիլի 20-ից մինչև մայիսի 3-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ,կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա մայիսի 6-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի, Մեծամորի թիվ 1 հիմնական դպրոցում. հասցեն՝ ք. Մեծամոր, 1 թաղամաս, 32-1/1:

Տեղեկությունների համար զանգահարել (0237) 3-35-71 կամ 093522166 հեռախոսահամարներով: